

Համաձայնեցված է  
Հայաստանի Հանրապետության  
Ֆինանսների նախարարության հետ  
*[Signature]* Գ. Սարգսյան  
*[Signature]* 16 2013թ. 2013թ.



Հայաստանի Հանրապետության  
Կառավարության առընթեր պետական  
կառավարման հիմնական  
կոմիտեի նախագահ  
Գ. Խաչատրյան  
*[Signature]* 2013թ.

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ**  
**ԱՆՀԱՏ ՁԵՆՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ**  
**ԱՌՔՈՒՎԱՃԱՌՔԻ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱՅԻՆ**  
**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ**  
**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) N7 հավելվածի 1-ին կետի 13-րդ ենթակետի համաձայն արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակ է համարվում անշարժ գույքի առքուվաճառքի կամ վարձակալության միջնորդային գործունեությունը:

Օրենքի N7 հավելվածի 2-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն անշարժ գույքի առքուվաճառքի կամ վարձակալության միջնորդային գործունեություն է համարվում անշարժ գույքի առքուվաճառքի և (կամ) վարձակալության հանձնման միջնորդական գործունեությունը:

Օրենքի N8 հավելվածի 13-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող ելակետային տվյալներն են՝ անշարժ գույքի առքուվաճառքի կամ վարձակալության միջնորդային գործունեության համար՝ աշխատողների թիվը:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի N1007-Ն որոշմամբ հաստատված՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրման կարգի 6-րդ կետով պաշտոնապես պարզաբանում եմ.

Անհատ ձեռնարկատիրոջ կողմից ինքնուրույնաբար (առանց այլ աշխատողների) անշարժ գույքի առքուվաճառքի և (կամ) վարձակալության հանձնման միջնորդական գործունեություն իրականացնելու դեպքում արտոնագրային վճարի հաշվարկման համար ելակետային տվյալը որոշելիս անհատ ձեռնարկատերը համարվում է մեկ աշխատող: